

**1.2.2. Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2001թ. հունվար-ապրիլին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 42.9 մլրդ.դրամ, որը 2000թ. մակարդակը գերազանցել է 1.9%-ով, 2001թ. ապրիլի համախառն արտադրանքը կազմել է մարտի 95.8 %-ը (համադրելի գներով):

Հանրապետությունում շարունակվում են գարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով, 2001թ. մայիսի 1-ի դրությամբ ընդամենը կատարվել է 81725 հա գարնանացան մշակաբույսերի ցանք, որը 2000թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշը գերազանցել է 33586 հա-ով կամ 69,8%-ով: 2000թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ գարնանացանի աճը հետևանք է 2000թ. երաշտի, սակավաջրության և սերմացուի պակասի պատճառով չցանված աշնանացանի տարածությունների վրա, 2001թ. գարնանացան հացահատիկային մշակաբույսեր ցանելուն:

**Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի գարնանացանի ընթացքը**

(հեկտար)

Մշակաբույսերի անվանումը	Կանխատեսված ծավալը	Ցանվել է		1.05.2001թ. %-ով սպասվելիք ծավալի նկատմամբ	1.05.2001թ. %-ով 1.05.2000թ. նկատմամբ
		1.05.2001թ	1.05.2000թ		
Հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսեր	114942	63454	30752	55,2	206,3
Կարտոֆիլ	32500	11856	11068	36,5	107,1
Բանջարանոցային մշակաբույսեր	20500	3047	3981	14,9	76,5
Բոստանային մշակաբույսեր	3500	706	700	20,2	100,9
Կերային մշակաբույսեր	22150	2379	1365	10,7	174,3
Տեխնիկական մշակաբույսեր	3848	283	273	7,4	103,7
<b>Ընդամենը</b>	<b>197440</b>	<b>81725</b>	<b>48139</b>	<b>41,4</b>	<b>169,8</b>

**Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2001թ. մայիսի 1-ի դրությամբ (հաշվարկային տվյալներով)**

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)*, հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ
Արագածոտն	2,3	100,0	13,9	99,3	4,9	102,1
Արարատ	1,3	92,9	7,7	98,7	6,3	95,5
Արմավիր	1,4	100,0	8,0	99,5	7,7	65,8
Գեղարքունիք	3,2	97,0	19,7	99,4	6,8	95,8
Լոռի	2,5	104,2	13,9	98,9	3,5	94,6
Կոտայք	1,6	94,1	10,6	99,0	55,4	195,8
Շիրակ	2,5	96,1	15,6	99,5	6,4	97,0
Սյունիք	1,6	88,9	10,1	100,0	2,9	96,7
Վայոց Ձոր	1,0	100,0	5,5	100,0	1,9	100,0
Տավուշ	1,6	94,1	8,7	98,8	4,6	93,9
ք.երևան	0,2	100,0	0,8	100,0	11,7	131,5
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>19,2</b>	<b>96,7</b>	<b>114,5</b>	<b>99,3</b>	<b>112,2</b>	<b>128,4</b>

\*) Ներառյալ ներքին սպառումը:

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2001թ. հունվար-ապրիլին իրացվել է 19,2 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը զիջել է 2000թ. ցուցանիշը 0,6 հազ. տոննայով կամ 3,3%-ով, կաթինը՝ 0.8 հազ. տոննայով կամ 0.7%-ով, իսկ ձվի արտադրությունը գերազանցել է 2000թ. նույն ցուցանիշը 24,8 մլն. հատով կամ 28,4%-ով: